

- Մեծերը մեծերի մասին -



1971 թվականին գրված այս անփոփ հոդվածի հրատարակումն առանձնահատուկ է Երևանում, որ 2011 թվականին լրացավ էլ հոդվածի հեղինակ, վաստակաւաս ճարտարապետ Տրան Մանուկյանի, էլ Երևան հոդվածի հեղինակ, վաստակաւաս ճարտարապետ Սոս Մանուկյանի 100 տարին: Այսօր երկուսն էլ իրենց ուրույն տեղն ունեն հայկական ժամանակակից ճարտարապետության դասմության էջերում:

# ԽՈՍՔ ԳՈՐԾԵՆԿԵՐՈՋ ՄԱՍԻՆ՝ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԵՌՎԻՑ...

*Սոս*

Բարերի լռությունից հետո հայ ճարտարապետությունը թեւակոխեց իր նոր վերածնունդը՝ աննախադեպ իր նշանակությամբ եւ մասշտաբներով:

Անցած 50 տարիների ընթացքում հայ շինարարական արվեստը բուռն ծաղկում ապրեց, ճարտարապետական այնպիսի գործեր ստեղծվեցին, որոնք հանդիսացան նոր գլուխգործոցներ եւ, որպես այդպիսիք, արժանացան ընդհանուր ճանաչման:

Մի առիթով մեր վաղամեռիկ տաղանդավոր ճարտարապետ Յուրի Կոնյանցի Մարգարյանը միութենական հանդեսներից մեկում գրել էր. «Ալեքսանդր Թամանյանի նախագծերով կառուցված կառավարական տունը եւ Օպերայի ու բալետի թատրոնի շենքը կարող են եվրոպական ցանկացած պետության մայրաքաղաքի գարդը հանդիսանալ»: Սովետական իշխանության օրոք ընդամենը երեք-չորս տասնամյակների ընթացքում արմատապես փոխվեց մեր հանրապետության բոլոր բնակավայրերի՝ գյուղերի ու քաղաքների ճարտարապետական դեմքը: Ահա այդ ժամանակներում էլ վերջնականապես ձեւավորվեց հայ նոր ճարտարապետությունը եւ, ի պատիվ հիմնադրի, այն հռչակվեց եւ կոչվեց Թամանյանական դպրոց:

Չայ ճարտարապետության թամանյանական դպրոցի հետեւողական սաներից եղավ այսօր իր 60-ամյակը բոլորած (հոդվածը գրված է 1971 թվականին – խմբ.), Չայկական ՍՍՀ վաստակավոր շինարար, ճարտարապետ Սոս Մանուկյանը, որի հրեքյանի

օրերը սիրով նշում է մեր ճարտարապետական հասարակությունը:

1930թ. սկզբում Երեւանի պետականլսարանի տեխնիկական փոխաբերեն ստեղծվեց Շինարարական ինստիտուտը եւ հանրապետության տեխնիկական կադրերի պատրաստման գործը նոր, մեծ մասշտաբներ ընդունեց: Այնտեղ ուսանելու եկան աշխատավորական լայն զանգվածների զավակներ: Նրանք եկան գործարաններից ու գյուղերից, ամեն տեսակի ուսումնական հաստատություններն ավարտած, երբեմն նույնիսկ չավարտած երիտասարդներ եւ արդեն հասակ առած ոչ երիտասարդներ: Ահա այդ ժամանակ էլ շինարարական ինստիտուտում ուսանելու եկավ ֆաբրիկայում ավարտած ծովագյուղի պատանի Սոս Մանուկյանը: Նրա իսկական կենսագրությունն սկսվում է հենց այստեղից, քանի որ մանկությունն անցել էր այնպես, ինչպես հորը վաղ կորցրած, մոր խնամքին մնացած եւ ապա սեփական աշխատանքով ընտանիքը խնամող հայ հազարավոր մանուկների ու պատանիների կյանքն էր անցել:

1937թ. Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտած Սոս Մանուկյանը ինժեներ-ճարտարապետի կոչումով կյանք մտավ ու այն օրվանից մինչեւ այսօր ջերմ նվիրումով ծառայում է իր ժողովրդին ու իր սիրած արվեստին՝ ճարտարապետությամբ: Դեռեւս 1936 թվականին նա կազմեց Արարատյան դաշտավայրի 10 կոլտնտեսային գյուղերի վերակառուցման հատակագծերը, Սեւան քաղաքի հատակագիծը, Երեւանի Կալինինի փողոցի կառուցապատ-



Սոս Մանուկյանն իր 70-ամյակի օրը Ս. Խանգաղյանի հետ, Ծովագյուղ, 1981թ.



Դուստր Սելյանուշի, Նասայրա թոռնիկի եւ արվեստաբանության դոկտոր Իզմայլովայի հետ Ծովագյուղում, 1976թ.



Հյուրանոց Էջմիածնում, 1945-46թթ.



650 սեղով մշակույթի թալաս Էջմիածնում, 1944-50թթ.

ման նախագիծը, ապա Քաջարանի եւ Օխչիի բանավանների հատակագծերը: Ճարտարապետն այնուհետեւ ստեղծեց Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագիծը, ձգտելով պահպանել եղած արժեքավորը քաղաքի ինքնուրույն դեմքը: Նա այդ նախագծով նախանշեց քաղաքի վարչական կենտրոնը, արդյունաբերական շրջանները, օդակաձեւ պուրակը, Արագած-Արարատ առանցքային մայրուղին, պատմական հուշարձաններին վերապահեց այգի-թանգարանների դիրքն ու նշանակությունը նոր քաղաքում:

Երիտասարդ ճարտարապետ Մանուկյանի խաղաղ ստեղծագործական աշխատանքն ընդհատվեց Երկրորդ համաշխարհային պատերազմով, որին նա մասնակցեց Սովետական բանակի շարքերում, կռվեց տարբեր ճակատներում, իր պարտքը կատարեց Լենինգրադը բլոկադայից ազատագրելու մարտերում: 1944թ. զորացրվելով բանակի շարքերից՝ շարունակեց իր կիսատ թողած գործերը. նախագծեց Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանի բանավանը Դեբեդի բարձրադիր ափին, այնտեղ կառուցվող կարելոր շենքերը եւ հրապարակի ողջ համալիրը: Այնուհետեւ միմյանց հաջորդում են նոր նախագծեր, որոնցով կառուցվում են Էջմիածնի Սիկոյանի անվան կոլտնտեսության կուլտուրայի հայտնի պալատը, մի շարք բնակելի եւ վարչական շենքեր Մյասնիկյանի, Աթաբեկյանի, Արարատյան, Բաղրամյան փողոցների վրա, ակումբային շենքեր Վերին Ջեյվա գյուղում եւ Սեւանա կղզում, Կույրերի



Այլումինի գործարանի մշակույթի տունը Երեւանի «Ջեյթոն» թաղամասում, 1953-54թթ.



Սոս Մանուկյանը կնոջ՝ Վարդիթեր Աֆրիկյանի հետ, 1937թ.



Նախաբուժարան Երեւանի «Նորֆ» թաղամասում, 1947թ.





**Թումանյան բանավանի կենսրոնական հրադարակի ընդհանուր տեսքը, 1946-52թթ.**



**Բնակելի շենք Թումանյան բանավանում, 1951թ.**



**Բնակելի շենք Երեւանի Արշակունյաց դղրոջայում, 1950-52թթ.**

տան կոմբինատը, կույրերի միավորման, Մետալուրգիտի, Գյուղէներգոյի բնակելի եւ վարչական շենքերը Իսահակյան փողոցի վրա (Աբովյան եւ Նալբանդյան փողոցների միջեւ ընկած հատվածում), Քանաքեռի այլումինի, Լամպերի գործարանների բանավաններն ու նրանց բազմաթիվ բնակելի շենքերը, Կանազի կուլտուրայի շքեղ պալատը, Շամպայն գինիների գործարանի լցման ցեխը, Օրջոնիկիձեի պողոտայի վրա կանգնած սննդարդյունաբերության եւ ավտոմոնիստրոլյունների բնակելի շենքերի համալիրը, Զրագդան գետի աջափնյա գետի բարձունքի վրա՝ Կոնյակի գործարանից հյուսիս-արեւմուտք ընկած բնակելի շենքերի համալիրը, Ժամացույցի գործարանի բնակելի շենքերը, բնակելի շենքեր Լենինական քաղաքում, Սպիտակի շաքարի գործարանի բանավանում եւ հայրենի Ծովագյուղում, կոմբինատը եւ բանավանը Շորժայում, երկաթուղու եւ ավտոկայանի շենքերը Ծովագյուղի մոտ, գյուղական եւ միջշրջանային հինգ միկրոէկոլոգիայային շենքեր եւ բազմաթիվ, բազմապիսի այլ կառուցումներ:

Վերոնշյալ կառուցումներից, որպէս ճարտարապետական արվեստի երկեր, առավել նշանակալիցներից են Էջմիածինի գլխավոր հատակագիծն ու Միկոյանի անվ. տնտեսության կուլտուրայի պա-

լատը, Քանաքեռի այլումինի գործարանի բնակելի թաղամասի համալիրը եւ կուլտուրայի պալատը, Օրջոնիկիձեի պողոտայի Սննդի արդյունաբերության եւ ավտոմոնիստրոլյունների բնակելի շենքերի համալիրն ու Շամպայն գինիների գործարանի լցման ցեխը: Դրանցից մի քանիսը եւ հատկապէս կուլտուրայի պալատներն ու Օրջոնիկիձեի պողոտայի բնակելի շենքերը մեր ճարտարապետական նվաճումներից են եւ ըստ արժանվույն պրոպագանդիվում են մեր եւ ոչ միայն մեր մամուլում:

Այն ճարտարապետական կոլեկտիվում, որտեղ գործել եւ ստեղծագործել է ճարտարապետ Սոս Մանուկյանը, որտեղ ծնունդ են առել վերոհիշյալ շինությունների նախագծերը, համատեղ աշխատել, միմյանց գործակցել են ինչպէս ավագ, այնպէս էլ կրտսեր սերնդի ճարտարապետների ու այլ մասնագիտությունների գործընկերներ: Ահա խորհրդատուներ՝ ականավոր ճարտարապետ Զովհաննես Մարգարյանն ու լայն հետաքրքրությունների տեր Սուքիաս Մանասյանը, երկրաբան Ալեքսանդր Դեմյոխիմն ու բժիշկ-քաղաքաշինարար Ներսէս Զակոբյանը, ճարտարապետ Զավեն Բախշինյանն ու Լենինգրադի պրոֆեսոր-ճարտարապետ Լեւ Իլյինը:

Առավել խոշոր կառուցումների նախագծեր կազմելիս ճարտա-



**Քանաքեռի այլումինի գործարանի բնակելի ավանի գլխավոր հասակագիծը, 1948-50թթ.**



**Վաղարշապատ ֆաղափ գլխավոր հասակագիծը, 1938-50թթ.**



Ակուրի բենիը Սեւանա կղզում, 1952-53թթ.



«Կղզի» երկաթգծի կայարանը, 1965-70թթ.

րապետ Սոս Մանուկյանի հետ որպես հեղինակակիցներ եղել են ճարտարապետներ Գեորգ Սուրգան և Կոստանտին Օհանջանյանը, Լեւոն Հակոբյանն ու Մարգո Յովհաննիսյանը, Վիլեն և Զորիկ Տոնիկյան եղբայրներն ու Սեդա Պետրոսյանը:

Այժմ ճարտարապետ Սոս Մանուկյանը գլխավորում է «Հայարդ-նախագիծ» ինստիտուտի արդյունաբերական հանգույցների բաժինը, որտեղ որոշվում են արդյունաբերական նոր հանգույցների և համալիրների տեղադրման և կոոպերացման հետ կապված հարցեր, մշակվում են նրանց համար միասնական գլխավոր հատակագծերի սխեմաներ:

Բազմաժանր ստեղծագործությունների հեղինակ Սոս Մանուկյանը հաճախ է մասնակցել մրցանակաբաշխությունների: 1945թ. հայտարարված՝ Երեւանում կառուցվելիք «Հաղթանակի կամարի» համահիւթենական մրցանակաբաշխությունում շահել է երրորդ մրցանակ: 1951թ. երիտասարդ ճարտարապետների ստեղծագործությունների համահիւթենական մրցանակաբաշխությունում արժանացել է երկրորդ մրցանակի: Նա մրցանակներ կամ շնորհագրեր է շահել նաև շինարարության և ճարտարապետության որակի մրցանակաբաշխություններում:

ճարտարապետ Մանուկյանը, մի շարք գիտական, տեխնիկական խորհուրդների անդամ լինելով, իր անաչառ ու շիտակ վերաբերմունքով օգտակար է լինում կառուցվելիք շինությունների նախագծերի քննարկումներում, հողվածներ ու գրախոսականներ գրում ճարտարապետական երկերի և գրքերի վերաբերյալ:

Լինելով Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ, սեկցիայի նախագահ՝ օգտակար գործունեություն է ծավալում այդ ասպարեզում:

Սովետահայ ճարտարապետության և շինարարության գործում մատուցած ծառայությունների համար ճարտարապետ Սոս Մանուկյանին տարիներ առաջ շնորհվել է Հանրապետության վաստակավոր շինարարի կոչում:

Իր կյանքի 60-ամյակը բոլորած վաստակավոր անվանի ճարտարապետ Սոս Մանուկյանին իր բարի մաղթանքներն են հղում գործընկերները, արվեստակիցները:

Ցանկանանք նրան ստեղծագործական նոր հաջողություններ ի բարօրություն մեր սիրելի հայրենիքի:

**ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ**  
15 մայիսի, 1971թ.



ԱԿՈՒՐ-1 ՀԵԿ-ը

Հայրենական մեծ լուսաբերումը զոհված ծովագյուղիների հիշատակը հավերժացնող հուշարձան Ծովագյուղում, 1970թ.